ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 90

«25» 08 2020 թ. ք. Երևան

ՍԵՎԱԿ ԱԼՖՐԵԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Սևակ Հովհաննիսյանը 2003 թվականից մինչև 2014 թվականն աշխատել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ 2003-2006թթ. զբաղեցնելով աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի, 2006-2009թթ.՝ աշխատակազմի իրավաբանական և ծրագրամեթոդական վարչության իրավական փորձաքննության բաժնի պետի, 2009-2011թթ.՝ աշխատակազմի ղեկավարի տեղակալի և 2011-2014թթ.՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնները:

2015 թվականի փետրվար ամսին Սևակ Հովհաննիսյանը նշանակվել է Երևան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնում: ՀՀ գլխավոր դատախազի 2016 թվականի մայիսի 11-ի թիվ 130-Ա հրամանով նշանակվել է Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ, որից հետո՝ ՀՀ գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 284-Ա հրամանով նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի տեղակալ, իսկ 2017 թվականի հուլիսի 20-ին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով նշանակվել է Արարատի մարզի դատախազ:

2020 թվականի փետրվարի 17-ից մինչ օրս Սևակ Հովհաննիսյանը զբաղեցնում է Կոտայքի մարզի դատախազի պաշտոնը:

Սևակ Հովհաննիսյանի կողմից ինչպես Արարատի, այնպես էլ Կոտայքի մարզի դատախազի պաշտոնները ստանձնելուց հետո էապես բարելավվել են տվյալ ստորաբաժանումների աշխատանքները գնահատելու համար անհրաժեշտ համապատասխան ցուցանիշները:

Մասնավորապես, էապես նվազել են վերադաս դատախազի կողմից քրեական գործով վարույթը կարճելու, կասեցնելու, ինչպես նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների վերացման դեպքերը, իսկ դրան զուգահեռ էապես աճել են դատախազությունների դատախազների կողմից ինչպես քրեական գործերով տրված ցուցումների, այնպես էլ հետաքննության մարմիններին տրված հանձնարարությունների քանակը:

Բացի նշվածից, բարելավվել են նրա ղեկավարած ստորաբաժանումների կողմից կայացվող ակտերի որակը:

Սևակ Հովհաննիսյանն իր աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորում է բարձր պատասխանատվություն, հետևողական է հանձնարարությունների ճիշտ և ժամանակին կատարման հարցում, օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ունակություններով: Նա պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է, բարեխիղճ, կարգապահ, վայելում է գործընկերների հարգանքը:

Սևակ Հովհաննիսյանի կողմից ղեկավարած ստորաբաժանումն աչքի է ընկել դատախազական գործունեության բարձր արդյունավետությամբ:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Սևակ Հովհաննիսյանը խրախուսվել է 3 անգամ, կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Սևակ Հովհաննիսյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Անցկացնել Կոտայքի մարզի դատախազ Սևակ Ալֆրեդի Հովհաննիսյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ